ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

07.01.22թ. N 01/19/93-2022

Ինֆորմացիայի ազատության
կենտրոնի նախագահ
տիկին Շուշան ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
Երևան, Կենտրոն, Փավստոս Բուզանդի փողոց, 1/3, 4-րդ հարկ
Էլ.փոստ foi@foi.am

2021 թվականի դեկտեմբերի 28-ի
N 348-74 գրություն

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր հարցմանն ի պատասխան հայտնում եմ.

1. Քաղաքաշինության կոմիտեում տեղեկություն ստանալու հարցումների քանակը ներառված է քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ:

2. Քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրությունը վարում է Քարտուղարությունը:

3. Հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ տեղեկություններ ստացվում են «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի միջոցով:

4. Քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության վերաբերյալ հարցման դեպքում ներկայացվում է համապատասխան տեղեկատվություն, միաժամանակ նշենք, որ 2021 թվականի ընթացքում Քաղաքաշինության կոմիտե ներկայացված հարցումների ընդհանուր թիվը կազմել է 42, որից քաղաքացիներ՝ 3, հասարակական կազմակերպություններ և լրատվամիջոցներ՝ 27, այլ հաստատություններ՝ 12:

5. Քաղաքաշինության կոմիտեն տեղեկատվության ազատության համար առանձնացված պատասխանատուի հաստիք չունի:

6. Քաղաքաշինության կոմիտեի քարտուղարության ընդհանուր և տեղեկատվության բաժնի աշխատակիցը 2019 թվականի հուլիսի 28-ին մասնակցել է «Բեստ Վեստերն Փլաս

Կոնգրես» հյուրանոցում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված «Իրազեկ ԶԼՄ-ներ - իրազեկ քաղաքացի» խորագրով քննարկում-սեմինարին:

Հարգանքով՝

07/01/2022

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

Կատարող՝ անձնակազմի կառավարման
բաժնի պետ Ալվարդ Գրիգորյան
011 621 735